



Մամուլի հաղորդագրություն

Համաշխարհային Կրթության Բաց Դռների Օր 2018

13:00 - 20:00, փետրվարի 24
Օպերա Սյուրս հյուրանոց,
Երևան, ՀՀ

Հարգելի՛ գործընկերներ,

«Լոնդոն Այ» միջազգային ուսումնական կենտրոնը սույն թվականի փետրվարի 24-ին ժամը 13:00-19:00-ը հրավիրում է ամենամյա «Համաշխարհային կրթության բաց դռների օր» խորագրով միջոցառմանը: Կրթական Ցուցահանդեսը տեղի կունենա Երևանի Օպերա Սյուրս հյուրանոցի Մոցարտ սրահում:

«Լոնդոն Այ» միջազգային ուսումնական կենտրոնի հրավերով Հայաստան են ժամանելու աշխարհում բարձր վարկանիշ ունեցող համալսարանների և ուսումնական հաստատությունների պաշտոնական ներկայացուցիչները: «Համաշխարհային կրթության բաց դռների օր» հանդիպում-խորհրդատվության ընթացքում ԱՄՆ-ի, Մալթայի, Անգլիայի, Չեխիայի, Իսպանիայի Շվեյցարիայի և Չինաստանի հեղինակավոր բուհերի և ամառային դպրոցների ներկայացուցիչները մանակիցներին մանրամասն տեղեկատվություն կտրամադրեն բակալավրի, մագիստրոսական, դոկտորական ծրագրերի և կրթաթոշակների վերաբերյալ:

Կրթական Ցուցահանդեսին ներկա կլինեն INTO՝ աշխարհի առաջատար համալսարանները միավորող հիմնադրամը՝ Իրինա Շերբակովայի գլխավորությամբ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Չինաստան, Անգլիա), Անտոն Կոտովը՝ Glion և Les Roches հյուսնընկալության ոլորտում առաջատար համալսարանների ներկայացուցիչը, Սվետլանա Մոժուխինան՝ ClubClass Լեզուների դպրոցի ներկայացուցիչը (Լոնդոն, Մալթա), Study Group (ԱՄՆ, Անգլիա, Հոլանդիա, Իռլանդիա, Կանադա) առաջատար համալսարանները միավորող հաստատությունը՝ Բայո Ավետուի գլխավորությամբ , քրիստանական Newcastle համալսարանի ներկայացուցիչ Կարիսա Արմեյդան, "Shorelight" ԱՄՆ առաջատար համալսարանները միավորող հաստատությունների ներկայացուցիչ Միլա Լիստապաղը և «Լոնդոն Այ» միջազգային ուսումնական կենտրոնի արտաքին կապերի պատասխանատու Սերգեյ Բոչարյանը:

«Լոնդոն Այ» միջազգային ուսումնական կենտրոնը հիմնադրվել է 2011 թվականին Երևանում: Կենտրոնում ուսուցանում են օտար լեզուներ՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, չինարեն, ինչպես նաև քննությունների նախապատրաստում՝ TOEFL, IELTS, և այլն: Կենտրոնը առաջարկում է բակալավրի և մագիստրոսական ծրագրեր արտասահմանում, ինչպես նաև ամառային ճամբարներ (կրթական/ժամանցային/սպորտային), վերսպատրաստումներ, աշխատանքային փորձի ապահովում: «Լոնդոն Այ» միջազգային ուսումնական կենտրոնը միջազգային ճանաչում ձեռք բերեց 2016թ նոյեմբերին և անմիջապես ճանաչվեց Պեկինի Համալսարանի միակ պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում: Ավելի ուշ, 2018 թ հունվարին ճանաչվեց ECCE (Չեխիա) պաշտոնական և միակ ներկայացուցիչը տարածաշրջանում՝ հնարավորություն ընձեռելով հայ երիտասարդներին միջազգային աշխատանքային փորձ ձեռք բերել բժշկության, նարտասպորտության, բիզնեսի և իրավունքի ոլորտներում Եվրոպական Երկրներում :

London Eye ITC Կոնտակտային անձ՝
Էլիզա Վարդանյան

«Կրթություն արտերկրում. բաց դռների օր» Միջոցառման համակարգող
Հեռ՝ +3747750158

Էլ. հասցե՝ londoneye.yerevan@gmail.com